

ՀԱՅ-ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌՆՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(վաղ միջնադար—XVIII դար)

Ա. Հ. ԲԱՆՁԻՆՅԱՆ

Պատմական այլևայլ աղբյուրներ և մի շարք ուսումնասիրողներ տեղեկություններ են հաղորդում միջնադարում հայ ժողովրդի և հայոց քաղաքակրթության՝ սկանդինավյան իրականության հետ ունեցած ամենատարբեր առնչությունների մասին: Տակավին վաղ միջնադարից Հյուսիսային Եվրոպայի (նորդիկ) ժողովուրդները պատահական կապեր են ունեցել հայության և նրա մշակույթի հետ թե՛ իրենց իսկ երկրներում և թե՛ Արևելքում: Առաջին հայացքից անհավանական է թվում միջին դարերում նման շփումների առկայությունը միմյանցից այնքան հեռու գտնվող ժողովուրդների միջև: Սակայն ինչպես մի առիթով նկատել է ուկրաինացի պատմաբան Յարոսլավ Դաշկևիչը, «Իրական տարածությունը Սկանդինավիայի և Հայաստանի միջև այնքան հեռու չէ, որքան կարող է թվալ առաջին հայացքից»¹: Սկանդինավիա ասելով նկատի ունենք ոչ միայն Սկանդինավյան թերակղզու վրա գտնվող Շվեդիան և Նորվեգիան, այլև Դանիան, Ֆինլանդիան և Իսլանդիա կղզին: Հյուսիսային Եվրոպայի երկրներից Ֆինլանդիայի հետ տակավին չենք հայտնաբերել միջնադարյան առնչության որևիցե հիշատակություն, իսկ մնացած երկրների (մինչև անգամ՝ Գրենլանդիա կղզու) հետ միջնադարի ընթացքում եղել են փոքր ու մեծ տարրեր շփումներ:

Հայ-սկանդինավյան հնագույն պատմամշակութային աղբյուրների թեման տակավին չի դարձել համալիր ուսումնասիրության նյութ: Ա. Աբրահամյանի «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության» աշխատությունում ոչ մի հիշատակություն չկա սկանդինավյան երկրների հետ հայության կապերի մասին²: Տարբեր հետազոտողներ զանազան առիթներով սույն թեմային առնչվող որոշ հիշատակումներ են կատարել և առաջարկել վարկածներ, սակայն գործը չի հասել նույնիսկ մի ամբողջական հոդվածի: Միակ համակողմանի ուսումնասիրությունը, կապված հայ-իսլանդական առնչակցության դրվագի հետ, կատարել է վերոհիշյալ Յարոսլավ Դաշկևիչը³: Իսլանդացի պատմիչ Արի Ֆրոդ Թորգիլսոնի «Գիրք իսլանդացիների մասին» աշխատության մեջ հիշված են երեք հայ եպիսկոպոսներ՝ Պետրոսը, Ստեփանոսը և Աբրահամը, որոնք XI դ. քրիստոնեություն են քարոզել Իսլանդիայում: Դաշկևիչը իսլանդական և այլ աղբյուրների հիման վրա հանգամանորեն քննել և ապացուցել է այդ վկայության պատմական ճշմարտությունը, որոշել հայ քարոզիչների՝ Իսլանդիայում հայտնվելու հնարավոր ժամանակահատվածը, նրանց գործունեության հավանական բնույթը և քննել այլ հարցեր: Երեք հայ կրոնավորների գործունեությունն Իսլանդիայում այդ երկրի հետ Հայաստանի ունեցած դրեթե միակ առնչությունն է, եթե հաշվի չառնենք նաև հետևյալ իրողությունը: XII—XIII դդ.

1 Yaroslav R. Dachkevitch. Les Arméniens en Island (Xie siècle) [Revue des études Arménienne, Paris, 1986—1987, № 20. p. 327].

2 Աշոտ Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Ե., 1965, հ. Բ, Ե., 1967.

3 Dachkevitch, նշվ. աշխ., էջ 321—336: Սույն հոդվածի ռուսերեն տարբերակը լույս է տեսել «Скандинавский сборник» ժողովածուում (вып. 33, Таг. 1990, с. 87—97):

հայազգի հերոս Հանտոնացի Բյովի մասին ասպետական վեպն ունեցել է տարրերակներ եվրոպական մի քանի երկրներում, նաև Իսլանդիայում⁴:

Սփյուռքահայ մամուլի վկայությամբ՝ շվեդարենակ ճարտարապետ Տեր-Հակոբյանը ֆրանսերեն լեզվով գրել է «Հայերի ազդեցությունը շվեդների վրա» վերնագրով աշխատություն: Շվեդիայում մեր կատարած որոնումները մեզ ամփոփեցին, որ եթե նույնիսկ այդ աշխատությունը եղել է, ապա մնացել է անտիպ: Նույն աղբյուրի համաձայն, 1966 թ. Հոմի Լեոնյան վարժարանում Տեր-Հակոբյանն իր ուսումնասիրության հիման վրա զեկուցում է կարդացել: Եւ փորձել է ապացուցել, որ միջնադարում շվեդները հայերից են փոխառել դորդադործությունը, ասեղնագործությունը, բանվածքի արվեստը, շվեդական երաժշտությունը ազդվել է հայկականից, իսկ շվեդներն որոշ բառեր է փոխառել հայերենից: Տեր-Հակոբյանը նշել է, որ տակավին VII դ. շվեդական ճարտարապետության վրա առկա է հայկականի ազդեցությունը: Բյուզանդիայում ճամփորդած որոշ շվեդներ ամուսնացել են հայուհիների հետ և իրենց հետ տարել Շվեդիա. աղբյուրները վկայել են կերպաս գործող և ուկե գավաթներ պատրաստող մի քանի հայ կանանց անուններ: X—XI դարերից հայտնի է մի շվեդական առասպել, թե ինչպես նավատեր Պետրուսը, լսելով Հայաստանի իշխանուհու գեղեցկության մասին, հեռվից սիրահարվել է նրան, եկել հայոց երկիր և բազում արկածներից հետո ամուսնացել նրա հետ: Կա վկայություն նաև այն մասին, որ երկու հայ եպիսկոպոս քարոզել են միջնադարյան Շվեդիայում: Տեր-Հակոբյանը վկայակոչել է նաև ուշ միջնադարին վերաբերող մի քանի այլ աղբյուրություններ⁵: Անգամ մամուլի սույն հաղորդագրությունը հուշում է, որ Տեր-Հակոբյանի վկայակոչումները սոսկ ենթադրություններ են և հազիվ թե գիտականորեն հիմնավորված լինեն:

Շվեդ պատմաբան Թուրե Արենն իր «Շվեդները և Արևելքի երկրները» աշխատության մեջ հիշատակել է հայ ժողովրդի հետ Շվեդիայի և շվեդ ժողովրդի ունեցած մի շարք առնչություններ՝ միջին դարերից մինչև մեր հարյուրամյակի սկիզբը⁶: Փորձենք ի մի բերել սկանդինավյան ժողովուրդների և երկրների հետ հայ ժողովրդի ունեցած առնչությունները՝ վաղ միջնադարից մինչև XVIII դ. վերջը:

Հայ մատենագրության մեջ սկանդինավյան աշխարհին վերաբերող առաջին վկայությունը գտնում ենք Անանիա Շիրակացու «Աշխարհացույցում»⁷. «Օվկիանոսում, Սարմատիայի և Գերմանիայի հանդեպ, գտնվում է մի այլ կղզի ես, որ կոչվում է Սկանդե: Այստեղ ապրում են գոթերը և բազմաթիվ այլ ժողովուրդներ: Այս կղզուց այն կողմ այլևս նավագնացություն գոյություն չունի, և ոչ մի մարդ դեռ չի հասել որևէ տեղ, այդ պատճառով էլ այն կոչվում է Անծանոթ ծով»⁸: Շիրակացին Սկանդե կղզին հիշատակել է ևս մեկ անգամ. «Արշնային կողմում՝ Դակիա մեծ երկիրն է, ուր բնակվում է սլավոնական րուսահինգ ցեղախումբ, սրանց տեղը կոչվում մտան գոթերը՝ գալով Սկանդիո կղզուց, որը կոչվում է գերմանական ծմիա»⁹: Ամերիկացի հայագետ Ռոբերթ Հյուսենը ենթադրել է, որ Շիրակացու հիշատակած Սկանդեն հավանաբար հարավային Նորվեգիան կամ Շվեդիան է¹⁰:

Մի քանի հայ և օտարազգի ուսումնասիրողներ հայկական հավանական ազդեցություն են տեսել սկանդինավյան հնագույն մշակույթի որոշ նմուշների

⁴ Գ. Մ. Карагеэян, Армения и армяне во французской литературе XI—XIV веков, М., 1988, с. 27.

⁵ «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 24.II.1966:

⁶ Ture J. Arne, Svenskarna och Österlandet, Stockholm, 1952.

⁷ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Ե., 1979, էջ 266:

⁸ Նույն տեղում, էջ 273:

⁹ The Geography of Ananias of Sirak (Asxarhac'oys'): the long and the short recensions; introduced, translated and commentary by Robert R. Hewsen, Wiesbaden, 1992, p. 45.

վրա: Հստ իսլանդացի պատմաբան Մագնուս Մար Լարուսսոնի՝ արևելյան աղ-
դեցութիւնը նորվեգիայի և Շվեդիայի մշակույթի վրա նկատելի է XI դ. կե-
սերից¹⁰: Սակայն հայերի շփումները հյուսիս-եվրոպական ժողովուրդների հետ
և նրանց վրա մշակութային հնարավոր ազդեցությունն ավելի վաղ շրջանի են
վերաբերում, քան XI դարը: «Հայ արվեստը,— գրել է ֆրանսիացի հետազոտող
Օգուստ Շուալին,— ...ծովը անցավ և տարածվեցավ Հարավային Ռուսիո և
Դանուբյան գավառներու մեջ, ...Հայկական ազդեցությունը կը հասնի Սքան-
տինավյան երկրները, բայց հոն ալ կանդ չառնեն»¹¹: Շուալին հավանաբար
նկատի ունի, որ հայկական տարրը ներթափանցել է Սկանդինավիայից ավելի
հյուսիս՝ Իսլանդիա, իսկ ավելի ուշ՝ Գրենլանդիա կղզին: Մեծ անակնկալ էր մի
հին դանիական սկզբնաղբյուրում XVII դ. սկզբին Գրենլանդիայի հայ բնակիչ-
ների մասին հիշատակությունը¹²:

Սկանդինավյան քաղաքակրթության վրա հայկական հնադուր ազդեցու-
թյան առաջին արտահայտությունը կապվում է ունական արձանագրություն-
ների հետ, որոնք ստեղծվել են V—VI դ., նորվեգիայի, Շվեդիայի, Դանիայի,
մասամբ նաև՝ Գերմանիայի և Անգլիայի տարածքներում: Ճարտարապետու-
թյան մասնագետ Արմեն Մանուկյանը հայկական խաչքարին նվիրված իր ու-
սումնասիրության մեջ հիշատակել է ունական արձանագրությունների և խաչ-
քարերի միջև առկա նմանությունների մասին: Հստ նրա, Արևելքից և Հայաս-
տանից բնակչության որոշակի հոսք է տեղի ունեցել Արևմտյան եվրոպայի
տարբեր շրջաններ, և դրանով կարելի է բացատրել սկանդինավյան ունական
արձանագրությունների վրա եղած ակնհայտ արևելյան տարրերի առկայու-
թյունը¹³:

Դեռևս 1899 թ. նորվեգացի լեզվաբան-հայագետ Սոֆուս Բուգգեն առաջա-
դրել է «Փութարք» անունով հայտնի հին ունական ալբուրենի վրա հայոց
լեզվի հնարավոր ազդեցության մասին վարկածը: Նրա տեսությունը զարգաց-
րել և ամբողջացրել է Նեոսեն Ակինյանը, փորձելով ապացուցել, որ ֆութարքն
իրականում ոչ թե ալբուրեն է, այլ գոթատառ գրաբար մաղթանք: Ակինյանը
ֆութարքի շարադրանքը վերծանել է այսպես. «Փութաքարուք օրհնել ԶԳՐԻՍ-
ՏՈՍ ՏէՐ էՄԱՆՈՒԷԼ ընդ մեզ Աստուած յաիտեանս յաիտենից»¹⁴:

Նորվեգացի բենեդիկտյուզ Ֆրիտյոֆ Նանսենը հայ ժողովրդին նվիրված իր
գրքում նշել է, որ որոշ նմանություններ են նկատվում մեր շիրմաթմբերի և
տապանաքարերի (ինչպես, օրինակ, Բոհուսլենում և Բլեքինգեում) և հայ-
կական գերեզմանոցների և շիրմաքարերի միջև¹⁵:

Որոշ ուսումնասիրողներ հիշատակել են Շվեդիայի տարածքում գտնված
հնագիտական առարկաների հավանական հայկական ծագման մասին: Տակա-
վին 1848 թ. շվեդ հնագետ Կարլ Յուհան Թորնբերգը նշել է, որ Շվեդիայում կա-
տարված պեղումների ժամանակ գտնվել են ապարանջաններ և մանյակներ, ո-
րոնք հավանաբար ձեռք են Հայաստանի Բերդա գյուղից¹⁶: Բերդան Մեծ Հայ-
քի Ուտիք նահանգի և 462-ից Հայոց Արևելքից կողմանց մայրաքաղաք Պար-
տավն էր: Շվեդիայում գտնված այլ հնություններ Թորնբերգը հնարավոր է
համարել, որ ստեղծվել են հայոց մայրաքաղաք Դվինում: Պատմաբան Թուրե
Արնեն Շվեդիայի և Արևելքի առնչություններին նվիրված իր հնագիտական աշ-

¹⁰ Magnus Mar Larsson, On the so-called Armenian bishops (Studia Islandica, Reykjavik, 1960, № 18, s. 37).

¹¹ Պ. Մ., Օտար կարծիքներ հայ արվեստին մասին (Նավասարդ, Բ շրջան, Պուրբեշ, 1925, էջ 168):

¹² Det Gronlandske chronica, Kiobenhavn, 1608, s. 21.

¹³ Khachkar (croci di pietra). Documenti di architettura Armena, 2, Milano, 1969, p. 10.

¹⁴ Հ. Նեոսեն վ. Ակինյան, Ս. Մաշտոց վարդապետ..., Վիեննա, 1949, էջ 408—429:

¹⁵ Fridtjof Nansen, Armenia and the Near East, New York, 1928, p. 274.

¹⁶ Carolus Johannes Tornberg, Numi cufici regii nurnophilacii holmiensisquos omnes in terra Sueciae reportos; Uppsaliae, 1848, p. XXIV.

խատուության մեջ (Արևելք ասելով նա նկատի է ունեցել գլխավորապես Ռուսաստանը) հիշատակել է շվեդական տարածքում հայտնաբերված հնագիտական մի շարք առարկաների՝ Հայաստանում պատրաստված լինելու իրողությունը։ Նա շվեդական հնությունների մի շարք տարրեր համեմատել է նաև հայ միջնադարյան արվեստի համանման տարրերի հետ¹⁷։ Նույն թեմային նա անդրադարձել է նաև «Շվեդական հողում գտնված մի քանի արևելյան առարկաներ» աշխատության մեջ¹⁸։

Մեկ այլ արևելագետ՝ Ֆրեդերիք Մարթինը շվեդական Մորա բնակավայրում (Դալարնա շրջան) հայտնաբերել է գոթելենի մի կտոր, որը բերվել է Հայաստանից և թվագրվել է XI դարով կամ ավելի վաղ ժամանակով¹⁹։ Ամերիկացի արվեստագետ Արթուր Ափհամ Փոփն իր «Հայկական վիշապազորգների առասպելը» հոդվածում նմանություններ է գտել հայկական մի գորգի թռչնազարդի և «Շվեդիայում վերջերս գտնված կարպետի թռչունի հետ»²⁰։

Հարկ է նկատել, որ Շվեդիայի տարածքում պեղվել են ոչ միայն ենթադրաբար Հայաստանում ստեղծված առարկաներ, այլև փոքրասիական, պարսկական, անդամ լինական ծագում ունեցող հնություններ։ Դրանց՝ Հյուսիսում հայտնվելու հնարավոր ուղին Թուրք Արևեն համարել է փոխանցումը «Հայաստանից և Պարսկաստանից... խազարներին և բուլղարներին (նկատի ունի Կամա-Վոլգայի բուլղարներին—Ա. Բ.), որոնց միջոցով էլ հասել են Ռուսաստան և Սկանդինավիա»²¹։

Հայերի և սկանդինավցիների շփումների մասին պատմական ստույգ փաստերի հայտ են գալիս սկսած X դ.։ X—XIII դդ. սկանդինավյան ժողովուրդների նախնիները՝ վիկինգները, իրենց արշավանքների շնորհիվ կապեր են հաստատել Արևմտյան Նվրոպայի, բալթիական ու սլավոնական ժողովուրդների և նրանց միջոցով՝ Մերձավոր արևելքի ժողովուրդների, նաև հայերի հետ։ Հայ ժողովուրդի հետ վիկինգներն առնչվել են Փոքր Ասիայում և Կոստանդնուպոլսում։ XI դ. բյուզանդական բանակը լեցուն է եղել անգլո-սաքսոն, ռուս, նորվեգացի, իսլանդացի և դանիացի վարձկաններով։ Բյուզանդական բանակում վարձված ռուս-սկանդինավ գինվորները պատմության մեջ հայտնի են վարյագներ (վարանգներ) անվամբ, որ հայ մատենագրության մեջ հիշվել են «վորանգ» ձևով։ Մոտավորապես 914 թ. վարյագները Վոլգա գետի և Կասպից ծովի ուղիով ներթափանցել են Հյուսիսային Հայաստան, զբաղվել վաճառականությամբ, երբեմն և թալանով։ Նրանք ճանապարհին կողոպտում էին խաղաղ բնակիչներին և վերադառնում իրենց երկրները՝ հարուստ ավարով²²։

Ֆրանսիացի ուսումնասիրող Գեորգ (Ժորժ) Դյուբյուիտը նշել է Ասիայից Նվրոպա արվեստի փոխանցման երեք աղբյուր, որոնցից առաջինը համարել է «Շուետեն իջած գերման ցեղերն»։ Նոքա անցնում են հարավային Գերմանիային և կանդ առնում են Սև ծովի ափերի վերա, Գաղղիա, Սպանիա և Իտալիա մտնելն առաջ։ Այս բարբարոսները ճոխապաճույճ զարդարած, ինչպես ցույց տալիս են Կլունիի գանձերն և Մետալիտներու հավաքածոն, իրանց ետևից ածում են Հայեր, որոնց հանդիպելիս են Կոստանդնուպոլսում կամ Փոքր Ասիայում»²³։

Վերը հիշված Շվեդիայում հայտնաբերված հայկական հնություններն ա-

¹⁷ Ture J. Arne, La Suede et l'Orient, Uppsala, 1914, p. 160, 216.

¹⁸ Ture J. Arne, Nagra orientaliska forml funna; Svensk jord, Stockholm, 1921.

¹⁹ Ture J. Arne, La Suede et l'Orient, p. 215.

²⁰ Arthur Upham Pope, The Mythe of Armenian Dragon Carpets (Jahrbuch der asiatischen Kunst, 1925, s. 149).

²¹ Ture J. Arne, La Suede et l'Orient, p. 182.

²² David Marshall Lang, Armenia; cradle of civilization, London, 1970, p. 179.

²³ Revue des arts asiatiques, Paris, 1925, № 1, տե՛ս Գեորգ Դյուբյուիտ, Արևելք և քրիստոնեական արվեստը (Բազմավեպ, 1927, № 2, էջ 47)։ Նույն հատվածի մեկ այլ հայերեն թարգմանությունը տե՛ս Պ. Մ., նշվ. հոդվ., էջ 168։

մենայն հավանականությամբ Սկանդինավիա են հասել նաև վիկինգների ու վարյագների կողմից Հյուսիս տարված (գերեվարված) հայերի միջոցով:

Հալ միջնադարյան պատմիչների երկերում հիշատակված են վարյագները՝ XI—XII դդ. պատմիչ Մատթեոս Ուռհայեցիի վրաց Դավիթ Բ Շինարար թառավորի բանակում հիշատակել է «Ֆրանկներին»²⁴։ Ըստ նրա, Դավթի ղորբում եղել են հինգ հարիւր ալան և հարիւր ֆրանկ²⁵։ Ակադեմիկոս Սուրեն Նրեմյանը հիմնավորապես ապացուցել է, որ Ուռհայեցին «Ֆրանկ» ցեղանվամբ նկատի է ունեցել ոչ թե առհասարակ Եվրոպացիներին, այլ մասնավորապես վարյագներին (ֆրանկ-վրանգ նմանությունից ելնելով)²⁶։ Նույն սրբին վերաբերող ուսումնասիրությամբ հանդես է եկել նաև պատմաբան Կարեն Յուզբաշյանը՝ XI դ. պատմիչ Արիստակես Լաստիվերտցու առնչությամբ, որի «Պատմության» մեջ հիշատակված է 1054 թ. սելջուկ Տուղրուլ բեկի դեմ մղված հակառակորդ ուսումնասիրությամբ հանդես է եկել նաև պատմաբան Կարեն Յուզբաշյանը²⁷։

Մեր ենթադրությամբ, նույն վարյագներն են նաև X դ. հեղինակ Շապուհ Բագրատունուն վերագրվող «Պատմության» մեջ հիշվող ֆրանկները։ Ըստ այդ աղբյուրի, Բյուզանդիայի Հերակլես կայսրը միաբանել է «գալեր» Հայոց և Ղվրաց և ՂԱդուանից, գՄիջագետաց և Յունաց և զՖոանկաց²⁸։ Սակայն պետք է նկատի առնել, որ մինչև այժմ հիշված վարյագները եղել են ոչ թե բուն վիկինգներ, այլ Կիևյան Ռուսիայից Բյուզանդիա եկած X դ. վերջերից հատուկ զորամաս կազմած ռուս-սկանդինավ վարձկանները։ Նրանց կորիզը կազմել են ոչ թե սկանդինավցիները, այլ ռուսները, սլավոնները²⁹։ Բայց և այնպես նրանց առկայությունը խոսում է Հայաստանում և հարակից շրջաններում սկանդինավյան տարրի թեկուզ և փոքրաթիվ ներկայություն մասին։ Փաստորեն միջնադարյան հայ մատենագիրների համար վարյագները և ռուսները նույնացել են, ուստի չի բացառվում, որ հայ միջնադարյան աղբյուրներում հիշվող «ռուսներ» և «ռուզիկը» ցեղախմբերի անունների ներքո նկատի են առնված նաև նրանց հետ խառնված սկանդինավցիները։

Հայերի և վարյագների միմյանց ճանաչել են որպես վարձկան զինվորներ Բյուզանդական բանակում և մեկտեղ կռվել են տարբեր երկրներում։ Այն, որ Բյուզանդական զորքի կազմում եղել են հայկական և վարյագների զնդեր, վկայակոչել են նաև օտար աղբյուրները։ Կոստանդին VII Միրանաթինը նշել է, որ Բյուզանդիայի հայազգի կայսր Ռումանոս I Լեկաբենոսի օրոք (920—944) նրա ղորբում, ի թիվս այլ ազգությունների, կռվել են նաև հայեր և ֆրանգանացիներ³⁰, որ ենթադրյալ վարյագներն են։ 1038 թ. կայսր Միքայել IV մի ընտրյալ զորք է ուղարկել Սիցիլիա, որի կազմում եղել են հայեր, վարյագներ և Իտալիայի նորմաններ³¹։

Մինչև այժմ խոսեցինք սկանդինավցիների վրա հայերի ունեցած հնարավոր ազդեցությունների մասին, որն ապացուցվում է նաև Արևելքում հայտնա-

²⁴ Գաուրլուս Ուոհլեյցի, Ժամանակագրություն, Վադարշապատ, 1898, էջ 350:

²⁵ С. Еремян, Юрий Боголюбский в армянских и грузинских источниках (Научные труды Ереванского государственного университета, т. XXIII, Ер., 1946, с. 380).

²⁶ Պատմություն Արիստակեսի վարդապետի Լաստիվերտցու, Թիֆլիս, 1912, էջ 78:

²⁷ Տե՛ս Կարեն Յուզբաշյան, Արիստակես Լաստիվերտցու «Պատմության» մեկ ապրանքագրի մասին. վրանգը և ոչ ֆրանկը (Բանբեր Մատենադարանի, 1958, № IV, էջ 77—82), նույնի՝ Варяги и прочие в сочинении Аристархеса Ластивертца (Византийский вестник, 1958, № XVI, с. 14—28).

²⁸ Պատմություն Անանուց զորացուրի կարծեցեալ Շապուհ Բագրատունի, Ե., 1971, էջ 59:

²⁹ Այս մասին տե՛ս Կ. Յուզբաշյան, նշվ. հոդվ., էջ 81—82:

³⁰ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 6, Բյուզանդական աղբյուրներ, Բ, Կոստանդին Միրանաթին, Ե., 1970, էջ 147, 307:

³¹ Mats G. Larson, Varingar: nordbor hos Kejsaren i Mikiagard, Stockholm, 1991, s. 48.

ված վիկինգների և վարյագների կողմից հայերին կողոպտելու, գերեվարելու կամ նրանց հետ առևտրական կապի մեջ մտնելու իրողությամբ: Սակայն արդյո՞ք այդ ազգեցությունը միակողմանի է եղել: Հայ ուսումնասիրողներից մեկը՝ այդ առթիվ նշել է. «Եթե այդ Հյուսիսականները (նորտիք) որ և իցե ազգեցություն ունեցած ըլլային Հայ դեղարվեստի վրա, Հայերը զործնական բառով պահած կ'ըլլային հիշատակը... նորտիք սկյուծական հրոսակները, Վրականյան լեռներեն անցան և խուժեցին Հայաստան... անոնց շփումը ոչ մեկ կերպով չէ կարողացած հեղափոխել Հայոց քրիստոնեական ճարտարապետությունը»³²:

Մենք հակված չենք այս պատահական և մակերեսային շփումների արգասիք համարել հայ և սկանդինավյան ժողովուրդների բանահյուսության մեջ առկա տիպաբանական և սյուժետային նմանությունները. ինչպես, կարելաֆինեական «Կալիալա» էպոսի սկիզբը՝ հերոսուհու հղիանալը ջրից հիշեցնում է «Սաունա ծուխը» էպոսի սկիզբը՝ Մովինարի հետ կապված դրվագը: Կամ. շվեդ արևելա-յարգետ Սթիգ Վիքստրեմը նշել է, որ հրեշտակին (աստծուն) դոհաբերված հորթի ոսկորից խաղողի վաղի առաջանալու մասին հայկական ավանդությունն առնչություններ ունի սկանդինավյան կամ հյուսիսային դիցաբանության հետ»³³: Առկա նմանությունները և տարբերակների դոլությունը երկու կողմի բանահյուսական ստեղծագործություններում ոչ թե փոխազդեցությունների, այլ ավելի շուտ ժողովրդական-դիցաբանական համընդհանուր մտածողության հետևանք են: Առավել ևս լուրջ չի լինի միջնադարյան այս թույլ փոխշփումների արդյունք համարել այն իրողությունը, որ հայ ժողովրդի մեջ առկա են նորդիկ տիպեր: Այս մասին հիշատակել են որոշ հեղինակներ³⁴, սակայն հարցը չի դիմանում դիտական քննության: Հայերի և սկանդինավյան տիպական որոշ նմանությունները սոսկ բացատրվում են նրանց միևնույն մարդաբանական տիպին (եվրոպեոիդ) պատկանելու հանգամանքով: Նմանապես լուրջ չի լինի քննել սկանդինավյան լեզուների և հայերենի մի շարք բառարմատների միջև եղած նմանությունները, որոնք էլ արդյունք են ոչ թե անմիջական կամ միջնորդավորված փոխառությունների, այլ մեկ ընդհանուր՝ հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանելու իրողության³⁵:

Հայ ժողովրդի առնչությունները բուն սկանդինավյան ժողովուրդների և երկրների (առավելապես Շվեդիայի) հետ սկիզբ են առել XVI դարում: 1568 թ. ձանադարհորդ-մատենագիր Փիրզադե Ղափանեցին այցելել է Եվրոպայի խոշորագույն երկրները, այդ թվում՝ Սկանդինավիա: Իսպանիայից նա ժողովում անցել է Անգլիա՝ «Ինչի՞զգաց երկիրն», ապա՝ Հյուսիսային Եվրոպայի երկրները, տալով որոշ տեղեկություններ դրանց մասին. «Դէնմարքայ երկիրն. Իշկոցայ երկիրն. Շիվէցոց երկիրն. Դ թագաւորի երկիր այ. Քրիստոս կայ հաւատան ծինուտն, շարչարան, խաչելութիւն, հարձումն, զամէն լողէն կինքէն մեռունուն, էն տղայ կինունք կիւյան, էն եկեղեցին երեցն Գ դիրքայ կանի

³² Հ. Գ. Նախապետյան, Քրիստոնեական ճարտարապետություն. պատմական հետազոտություններ (Բաղմավեյ, 1933, № 6, էջ 247):

³³ ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվ. ֆ. 426, ց. 1, դ. 1150, վավ. 2:

³⁴ Ֆրիտյոֆ Նանսենն իր ուղեգրական նոթերում նշել է, որ Հայաստանում հանդիպել է ամենատարբեր տիպերի՝ «դուռ հայկական թուխ տիպից... մինչև նորդիկ տիպերը»: Նա հիշել է մի երիտասարդի, որը տեսքով կարող էր լինել սկանդինավցի և նրան նմանեցրել է շվեդ որմնադիրներին (տե՛ս Nansen. Նշվ. աշխ., էջ 138): Այս մասին տե՛ս նաև Արտաշես Արեղյանի «Նորդիկ տիպեր հայոց մեջ» հոդվածը «Armeniertum-Ariertum» գրքում (Berlin, 1934, s. 11—15):

³⁵ Հ. Աճառյանն իր «Հայերենի արմատական բառարանում» հայոց բառարմատները բնակել է նաև սկանդինավյան հին և նոր լեզուների համեմատությամբ (տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Ե., 1971—1979: Շվեդ հայագետ էվալդ Լիդենը և հայերեն բառերը ստուգաբանել է սկանդինավյան լեզուների միջոցով (Armenische studien, Göteborg, 1906, Armenica, Göteborg, 1933):

անունն Հաւր և Որդու և Հոգին սրբուն. Պատարաքնին չեն հաւատալ ընդ Քրիստոս. մէկ դիրքայ խաչիլաւ ամեն սորա որոց գի հաւատան. սուրբ Մարիամայ, սուրբէն պարէխուս չեն ասիլ, խաչ չեն անիլ. դարիբին խիստ հարբիք կանեն. Քրիստոսայ ծինունդին ժծ արու ռթուրէք գր պահեն. պէնիլ չեն. գուտեն խիմեն. ուրախութիւն անին»³⁶:

Իսկ առաջին շվեդը, որ ճանաչել է հայերին Արևելքում, եղել է 1654—1656 թթ. Պարսկաստանում և Օսմանյան կայսրությունում ճանապարհորդած Մաթսոն Շիուփինգը: Իր ուղեգրական նոթերում նա բնութագրել է մի չանի աւրեւելյան ժողովուրդներին՝ հայերի մասին դրելով հետևյալը. «Հայերը քաջ հայտնի են, մի կողմից իրենց մշտապես քրիստոնյա մնալով, մյուս կողմից՝ իրենց ողջախոհության, աստվածասիրության և բուրքին հավատարիմ լինելու համար»³⁷:

Հայ-սկանդինավյան առնչությունների պատմության առաջին նշանակալից դրվագը կապված է հայ առևտրականների եվրոպական գործունեության հետ: Իրանի, մասնավորապես Նոր Զուղայի հայ վաճառականների՝ եվրոպա տանող նախընտրած ճանապարհը անցել է Սպահանից Շամախի կամ Թավրիզ, որից հետո Կասպից ծովով մինչև Աստրախան, ապա Վոլգա գետով, Կոստրոմայի տարածքով մինչև Մոսկվա և ապա Մալիտաի ծով, Քասուհեյտե ծովով կամ ցամաքով, Սկանդինավիայի վրայով՝ դեպի Արևմուտք: Դա մեծ առևտրական ճանապարհ էր, որ հնուց կոչվում էր «հայկական»³⁸:

Զուղայեցի առևտրականները մուտք են գործել նաև Շվեդիա, ապա իջել են Դանիա, Հոլանդիա, Գերմանիա և այլ երկրներ: Նրանք վերադարձել են նույն ճանապարհով՝ Ամստերդամի և Ստոկհոլմի վրայով Ռուսաստան, այնտեղից՝ Իրան, իրենց հետ տանելով եվրոպական ապրանքներ:

Իտալացի դիվանագետ Վինչենցո դ'Ալեսսանդրին 1571 թ. իր նոթերում նշել է, որ Արևելքից վաճառականները տարբեր ապրանքներ, մասնավորապես միտկալ են հասցրել Լեհաստան, Դանիա և Շվեդիա³⁹: XVII դ. հայ վաճառականներն ընդլայնել են եվրոպա ներմուծվող ապրանքների տեսականին՝ զենքեր, թամբեր, թանկարժեք քարեր (հատկապես զմրուխտ և մարգարիտ): 1661 թ. Նոր Զուղայի հայ առևտրական ընկերության ներկայացուցիչ Գրիգոր Լուսիկենցը (Լուսիկյան կամ Լուսիկով) Մոսկվայում պարսկական ապրանքների համար տարանցիկ ճանապարհի իրավունք է խնդրել՝ ռուսական քաղաքների վրայով Արխանգելսկ, որից հետո Մալիտաի կամ Հյուսիսային ծովերով դեպի Սկանդինավիա և Արևմտյան եվրոպա գնալու համար: Սակայն Շվեդիայի թագավոր Կարլ XI-ը այդ ճանապարհը համարել է չափազանց երկար և անուղղակի: Նա 1687 թ. գնեբարլ-լեյտենանտ Լյուդվիգ Ֆարրիցիուսի (1648—1729) ղեկավարությամբ քսան հոգիանոց մի պատվիրակություն է ուղարկել Իրան՝ հայ առևտրականների հետ բանակցելու՝ պարսկական առևտրի ուղին Շվեդիայի ճանապարհով փոխելու վերաբերյալ: Նոր Զուղայում Ֆարրիցիուսը հանդիպում է ունեցել քսան հայ առևտրականների հետ և քննարկել առևտուրն անցնելու կարճ ուղիով իրագործելու հարցը: 1688 թ. Ֆարրիցիուսը Շվեդիա է վերադարձել մի քանի հայ վաճառականների ընկերակցությամբ: Կարլ XI թագավորը և շվեդ հասարակությունը բարեհաճ ընդունելության են արժանացրել հայերին, իսկ թագավորական հատուկ հանձնաժողովը բանակցություններ է սկսել հյուրերի հետ: 1688 թ. վերջին Նոր Զուղայի հայ առևտրականները պայմանագիր են կնքել Շվեդիայի հետ և ձեռք բերել երկու տարվա աղատ առևտրի իրավունք: Նրանց իրավունք է տրվել ունենալ սեփական առևտրական կենտրոններ Ստոկհոլմում և Նարվայում: Շվեդական արքունիքի օժանդակությամբ

³⁶ Ուղևորութիւն Փիդգաուէի Ղափաճեցոյ (Բաղմալէպ, 1882, № 4, էջ 318):

³⁷ Ture J. Arne, Svenskarna och Österlandet. s. 159.

³⁸ Архипищен Августин (Никитин). Армянская христианская община Петербурга (Мена, СПб. 1996, 10, с. 234).

³⁹ Հովվ. Հակոբյան, Ուղեգրություններ, I, Ե., 1932, էջ 348:

Նարմալում հայերի համար կառուցվել է առևտրական տուն: Նրանց իրավունք է տրվել մուծել երկու տոկոս մաքս՝ պարսկական և մեկ տոկոս մաքս՝ եվրոպական ապրանքների համար⁴⁰:

Շվեդիա ներմուծվող ապրանքները թվարկելիս շվեդական առևտրի պատմության հետադոտոդ Արրահամ Վիլհելմ աֆ Սիլենը նշել է նաև «հայերի կողմից ներմուծվող պարսկական մետաքսը, որից տեղում պատրաստվել են գրել-խաշորներ»⁴¹, Այս ապրանքը բնորոշ է եղել հայ առևտրականների համար, որոնք իրանական հարդի մետաքսը հասցրել են Եվրոպայի ամենատարբեր անկյուններին: 1696 թ. հայերի մի խումբ Շվեդիա է հասցրել 1794 փութ մետաքս, իսկ հաջորդ տարի մեկ այլ խումբ՝ 873 փութ մետաքս⁴², Նրբ 1687 թ. հայ վաճառականները դժվարություն են ունեցել մետաքսը վաճառելիս, նրանց աջակցել է Ստոկհոլմի քաղաքապետը, որը դնել է ամբողջ մետաքսը:

Արխիվային նյութերից պարզվում է, որ 1688 թ. օգոստոսին Շվեդիայից իրենց բերած ապրանքները Մոսկվայից Աստրախան տանելու թույլտվություն են խնդրել հայ առևտրականներ Անուշ Վարդանովը և Սաֆար Վասիլևը: Առաջինն իր հետ ունեցել է հիմնականում կտորեղեն և հայելիներ, իսկ երկրորդը՝ մահուդ, դանակներ, պատառաքաղներ, 50 գիրք: 1691-ին 538 փութ, 25 ֆունտ ապրանքով Շվեդիայից Մոսկվա են վերադարձել հայեր Յակով Դավիդովը և Գրիգոր Բոդդանովը: 1696—1697 թթ. հայ վաճառականների տարբեր խմբեր Շվեդիա անցնելու խնդրանքով դիմումներ են հղել Պետրոս Մեծ կայսերը և այլն⁴³:

Հարկ է նկատել, որ ոչ բոլոր ջուղահայ առևտրականներն են կողմ եղել առևտուրը Սկանդինավիայով իրականացնելուն: 1695 թ. նորջուղայեցի երիտասարդ արկածախնդիր վաճառական Ֆիլիպ Սանին (Ֆիլիպ դը Ջաղլու) հայտնվել է Շվեդիայում, ներկայացել որպես կոմս Ֆիլիպ ֆոն Սանիս և շահել Կարլ XI թագավորի համակրանքը: Նա ամուսնացել է Ստոկհոլմի արքունիքից մի հարուստ կնոջ հետ, որը եղել է արքունի թոշակառու: Ֆիլիպ դը Ջաղլուն ձեռք տել է վերջ տալ Շվեդիայի հետ հայ վաճառականների սկսած առևտրին՝ պատճառաբանելով շվեդական պետության բարձր մաքսերը և այն, որ իբր Շվեդիայի թագավորը կրոնական ազատություն չի տալիս հայերին⁴⁴:

Իրանի հայ առևտրականների՝ Սկանդինավիայի և Եվրոպայի հետ ունեցած առևտուրն ընդհատվեց 1700 թ. սկսված ռուս-շվեդական պատերազմի հետևանքով, որը տևեց մինչև 1721 թ.:

Հայ մշակույթի ականավոր գործիչ Սիմեոն Լեհացին (1584—1637) 1629 թ. լվովում արտագրած Ոսկեփորիկի հիշատակարանում, խոսելով Լեհաստանի վերջին իրադարձությունների մասին, մասնավորապես նշել է. «յարեմտից կուս է անհաւատ ուրացողն, որ կոչի Շվէտ, մեր երկիրս մտեալ, զմեծամեծ քաղաքս, և անառիկ բերդս, էառ գիւղս և ագարակս և աւանս և յոյժ փարթամեցաւ աւերելով, ապականելով զերկիր...»՝ իր ցավն ու փստոսանքը հայտնելով շվեդ-լեհական պատերազմի առթիվ⁴⁵: Սիմեոն Լեհացին 1636 թ. գրած «Մեկնութիւն Հնգամասենին» գրքի հիշատակարանում դարձյալ գրել է շվեդների Լեհաստան

40 Arne Svenskarna och Österlandet, s. 59—60. Einar Ekegard, Studier i svensk handelspolitik under den tidigare frihetstiden, Uppsala, 1924, s. 87—92.

41 Abraham Wilhelm af Sillén, Svenska handelns och naringarnes historia under tre Carlarnes, Upsala, 1871, s. 158. 165.

42 Армяно-русские отношения. Сборник документов, т. 1, Армяно-русские отношения в XVII веке, ред. В. А. Парсамян, Ер., 1953, с. 43.

43 Նույն տեղում, էջ 196—197, 209, 213—224, 237—243, 246:

44 Սանիի մասին մանրամասն տե՛ս Ռոբերտ Կյուպենկյանի «Ջուղայեցի հայ վաճառական Ֆիլիպ տը Ջաղլի և պարսկահայ արևտուրին հաստատումը Մերձբալթյան երկրներում 1696 թ.» հոդվածը (Ռ. Վ. Կյուպենկյան, Հայ-պորտուգալական հարաբերություններ, Ե., 1986, էջ 311—330):

45 Սիմեոն դպրի Լեհացյա Ուղեգրութիւն տարեգրութիւն յիշատակարանը, ուսումնասիրեց և հրատարակեց Հ. Ներսէս Վ. Ալիքեան, Վիեննա, 1936, էջ 407:

կատարած ներխուժման մասին. «Իսկ երկրորդում ամի նորա թագաւորութեանն (նկատի ունի լեհաց Սիգիզմունդ թագավորին—Ա. Բ.) կրկին ապստամբեցաւ ոմն անհաւատ չար Շվէտն...», ապա նշել է, որ Զիգմունդ (Սիգիզմունդ) թագավորը «տիրեաց երկրին Շվէտու և Իֆլանտի»⁴⁶:

Հայ տպագիր գրականության մեջ ևս Շվեդիան հիշատակվել է XVII դարում: 1699-ին Ամստերդամում տպագրիչ Ղուկաս Վանանդեցին հրատարակել է «Գանձ չափոյ՝ կշռոյ՝ թույ և դրամից բոլոր աշխարհի» գիրքը, որտեղ աշխարհի լեզուները և լեզվաբանականները թվելիս նշված է հետևյալը. «Դօշի (գերմանական—Ա. Բ.) լեզուէն առաջ եկաւ ալլեմանի, ինգլիզի, ֆրամենգի, դանիմարքէզի, շուէթի և նորվեջի լեզուներ»⁴⁷: Նույն գրքում Հյուսիսային Նվրոպայի երկրների անունները հիշված են հետևյալ ձևերով. «Դանիմարքն, Նորվեջն, Շուէթն»⁴⁸:

Շվեդիան ծանոթ անուն է եղել նաև հայ ազատագրական շարժման գործիչ Իսրայել Օրու համար, որը Իրանում իր հավաքած տեղեկությունների հիման վրա գրված ծանուցագրերում մի քանի անգամ հիշել է շվեդ թագավորին և դեսպանին⁴⁹:

XVII դարում Շվեդիայի Կարլ Գուստավ թագավորի կենսատան կատարած արշավանքի ժամանակ գերեվարվել և Շվեդիա է տարվել հայազգի մի ազնվական՝ Կարլ Գամոցկին՝ ծնունդով կովից: Նա անցել է շվեդների կողմը և դարձել թուրքերենի թարգմանիչ: 1665 թ. Գամոցկին Շվեդիայի կողմից որպես էմիրսար ուղարկվել է Բոգդան համլինցկու մոտ բանակցությունների: Այնուհետև, ենթադրվում է, որ եղել է Թուրքիայում: Այս լեհահայ դիվանագետը երկար ժամանակ ապրել է Շվեդիայում և կատարել մի շարք հանձնարարություններ: Պահպանվել է Կարլ Գամոցկուց մի փորագրանկար՝ պատկերված 1672 թ. դեկտեմբերին, զինվորական շքերթի ժամանակ⁵⁰:

Առաջին խումբ հայերը, որ եկել և հավանաբար մնացել են Սկանդինավիայում եղել են 1714 թ. Թուրքիայից Շվեդիա ժամանած մի խումբ զինվորականներ: Այդ թվականին Կարլ XII թագավորը մեկնել է Օսմանյան կայսրության՝ Ուսսատանի դեմ համատեղ պատերազմ վարելու մասին բանակցությունների: Սրբ Շվեդիայի թագավորը վերադարձել է իր երկիրը, նրան հետևել է 60—70 մարդուց բաղկացած մի զորագունդ՝ կոմս Աքսել Սփարեի գլխավորությամբ: Զորագնդի կազմում եղել են հայեր, հույներ, հրեաներ, արաբներ և թուրքեր⁵¹: Տեղեկություն չկա, թե Շվեդիա հասնելուց հետո ինչ են եղել այդ զինվորականները. վերադարձել են արդյոք Կոստանդնուպոլիս, թե՞ մնացել և հիմնավորվել են Շվեդիայում:

XVII դ. սկսած հայերը դարձել են սկանդինավյան երկրների դիվանագիտական ներկայացուցիչներ Արևելքի երկրներում: 1721 թ. Կոստանդնուպոլսի շվեդական դեսպանատան գրագուման (թարգման) է նշանակվել հայազգի Հակոբ Ճամախոջուն (մոտ 1695—1775)՝ Փարիզի համալսարանն ավարտած առաջին հայ ուսանողներից մեկը և Իսահակ Նյուտոնի փիլիսոփայական երկի հա-

⁴⁶ Հայերեն ձեռագրերի Ժ դարի հիշատակարաններ (1621—1640 թթ.), հատոր Բ, կազմեցին Վ. Նալբաջյան, Ա. Հավանդյան, Ե., 1978, էջ 648:

⁴⁷ Ղուկաս Վանանդեցի, Գանձ չափոյ՝ կշռոյ՝ թույ և դրամից բոլոր աշխարհի, որով բոլոր աշխարհի վաճառականներին վարի, Ամստերդամ, 1699, էջ 50:

⁴⁸ Նույն տեղում, էջ 52:

⁴⁹ Армяно-русские отношения. Сборник документов, т. II, ч. I, Армяно-русские отношения в первой трети XVIII века, под ред. А. Иоаннисяна, Ер., 1964, с. 311.

⁵⁰ Elzbieta Swiecicka, Den diplomatiska trafiken mellan Sverige, Tatariet och Osmanska riket från Gustav Vasas tid till Kari XII., Den nordiska mosalken, Humanistdagarna vid Uppsala Universitet, Uppsala, 1997, s. 299—300).

⁵¹ Walther Bjorkman, Die Schwedisch-Türkischen Beziehungen bis 1800 (Festschrift Georg Jacob Leipzig, 1982, s. 17).

յերեն թարգմանիչը⁵²։ Ավելի ուշ Զմյուռնիայի շվեդական հյուպատոսարանի առաջին թարգմանն է եղել Հովհաննես Մուրատյան-Ժան Մուրադյան (1721—1787)։ Ուփսալայի համալսարանի գրադարանում պահվում է նրա ինքնագիր ֆրանսերեն կենսագրությունը՝ հայերեն ստորագրությամբ⁵³։ Ի դեպ, Ժան Մուրադյանի որդին՝ Իգնատիոս Մուրադյան դ'Օսսոնը (1740—1807) եղել է Շվեդիայի գործերի հավատարմատարը և դեսպանորդը Թուրքիայում, որի «Tableau général de l'empire Ottoman» (Paris, 7 vols., 1788—1824) («Ընդհանուր պատկեր Օսմանյան կայսրության») աշխատությունը նշանակալի տեղ ունի Օսմանյան Թուրքիայի պատմագրության մեջ։ Իսկ նրա թոռ, քաղաքական գործիչ և արևելագետ Աբրահամ Կոստանդին դ'Օսսոնը (1789—1851), Շվեդիայի դիվանագիտական ներկայացուցիչն էր եվրոպական մի քանի երկրներում և Շվեդիայի գիտությունների ակադեմիայի անդամ։

XVIII դ. շվեդ գիտական շրջաններում որոշ հետաքրքրություն է ստեղծվել հայոց պատմության և մշակույթի հանդեպ։ 1723-ին Ստոկհոլմում լույս է տեսել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» համառոտ տարբերակի լատիներեն թարգմանությունը, որ բնագրից կատարել էր շվեդ դիվանագետ, արևելագետ Հենրիկ Բրենները (1669—1723)⁵⁴։ Վերջինս ընդգրկված է եղել Լյուդվիգ Ֆարբիցիուսի վերոհիշյալ պատմիրականության մեջ և հայոց լեզուն սովորել է նոր Զուգլյում։ 1726 թ. Ուփսալայում հրատարակվել է աստվածաբան, եպիսկոպոս Օլավ Ցելսիի (Ցելսիուս, 1670—1756) լատիներեն ատենախոսությունը հայ եկեղեցու վերաբերյալ⁵⁵, 1711—1712 թթ. Փոքր Ասիայում, Երուսաղեմում և Եգիպտոսում ճանապարհորդել է Ուփսալայի համալսարանի պրոֆեսոր Միքայել Օլոֆսոն էնեմանը (1676—1714), որն իր ուղեգրության մեջ բազմիցս հիշել է հայերին⁵⁶։ 1757 թ. Ստոկհոլմում տպագրվել է շվեդ վաղամեռիկ Իմիշկ Ֆրեդերիկ Հասելքուիսթի (1722—1752) դեպի Արևելք կատարած ճանապարհորդության նկարագրությունը, որտեղ մի շարք տվյալներ կան հայության վերաբերյալ։ Հասելքուիսթը մանրամասն նկարագրել է հայ եկեղեցու ծիսակատարություններից մեկը, Երուսաղեմի հայկական եկեղեցին։ Նա մասնավորապես նշել է, որ հայերը «կառուցում են այնքան լավ, որքան կարելի է ակրեկալի մի ժողովուրդից, որն իր ողջ իմացությամբ մի տեսակ պարտական է բնությանը։ Եթե այս ժողովուրդը (հայերը) կարողանա Եվրոպա ուղևորվել և այնտեղ զարգացնել իր կարողությունները, մենք գուցե Արևմուտքում ունենանք բոլոր օգտակար գիտությունների մեջ վարպետներ, որոնք հավանաբար կմրցեն հնների հետ և կանցնեն նորերի շարքը»⁵⁷։

Այսպիսով, հայ-սկանդինավյան առնչությունները միջնադարում եղել են բազմաշերտ և ոչ սակավաթիվ, չնայած մեծ մասամբ կրել են տարերային բնույթ։ Սկանդինավյան քաղաքակրթության վրա հայ մշակույթի ունեցած հնարավոր ազդեցությունները կարող են իրագործված լինել ինչպես մինչև Հյուսիսային Եվրոպա հասած հայերի, այնպես էլ Արևելքում հայտնված հյուսիսցիների (վիկինգներ և վարյագներ) փոխադարձ շփումների շնորհիվ։ Հետագա առնչությունները նույնպես հիմնականում ընթացել են նույն ուղիով և նր-

⁵² Պիմլեն Զարդարյան, 250 տարի առաջ հայ ուսանող մը Բարիսի մէջ, (Երջանիկ տարեգիրք, Իսթանպուլ, 1950, էջ 115—119)։

⁵³ Ուփսալայի համալսարանի գրադարան (Քարոլինա Ռեդիվիլա), Զեռագրերի բաժին, Գուսաւ թագավորի ձեռագրերի հավաքածու, հ. II, F 420, N 92։

⁵⁴ Epitome commentariorum Moysis Armeni de origiue et regibus Armenorum et Part-horum, item series principum Iberiae et Georgiae, cum notis et observationibus Henrici Brenneri, Stockholm, 1723.

⁵⁵ Olav Celsi, Dissertatio de hodierno stato Ecclesiae Armenorum, Upsalae, 1726.

⁵⁶ Michael Eneman, Resa i Orienten 1711—1712..., Upsala, 1889, s. 43, 211-212-237 և այլն։

⁵⁷ Frederick Hasselquist, Voyages and travels in the Levant..., London. 1766, p. 101.

շանավորվել են նորշուղայեցի հայ առևտրականների՝ սկանդինավյան երկրների հետ հաստատած կապերով: Հայերը և սկանդինավները փոխադարձաբար սիմուսց հիշել են իրենց մատենագրության մեջ, իսկ արդեն XVIII դ. սկզբին մասնավորապես Շվեդիայում հետաքրքրություն է առաջացել հայագիտության հանդեպ:

АРМЯНО-СКАНДИНАВСКИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫЕ ОТНОШЕНИЯ

(с раннего средневековья по XVIII в.)

А. Г. БАХЧИНЯН

Резюме

Исследователи указывают на возможность армянского влияния на некоторые элементы древней нордической цивилизации (об этом свидетельствует археологический материал из Армении, найденный в Швеции). В X—XIII вв. с армянами контактировали викинги и варяги (наемные солдаты скандинавско-русского происхождения), о чем имеются сообщения у средневековых армянских историков. В дальнейшем, начиная с XVI в., армяне наладили контакты со шведами. В XVII в. велась активная торговля между армянскими купцами Ирана со Швецией, которая служила транзитом для торговли с Европой. Начиная с XVII в. некоторые шведские путешественники упоминали об армянском народе. А уже в XVIII в. в научных кругах Швеции заинтересовались историей и культурой Армении.